ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՐ-ԴՈՍ.—«ԱՆՆԱ ՍԱՐՈՑԵԱՆ», էտիւդ։ Հրատարակութիւն Բարսեղ Քամալեանի, Թիֆլիս. տպարան Տ. Նազարեանի. 1890 թ., արտատպած «Նոր-Դար» լրագրից, 76 երես, տառ № 10. գինն է 30 կ.։

«Աննա Սարոյեանը» նամակների և յիշատակարանի ձևով գրած և վիպական բնաւորութիւն կրող մի փոքրիկ նկարագրութիւն է՝ արժանի հայ ընթերցողի ուշադրութեան։ Նար-Դոսը նկարագրում է հարստութիւնից զրկւած մի դժբաղդ ընտանիք, որը անկարող և անպատրաստ է հանդիսանում իւր ապրուստը հայթայթելու և կամաց կամաց քայքայւում է։ Սնանկութեան պատճառը բերւած է ընտանիքի հօր թուղթ խաղալը։ Հայրը սիրում է իւր ընտանիքը. նա՝ իւր զաւակներով ուրախանում է, մխիթարւում է և չը նայելով այդ բոլորին՝ նա սիրտ է ունենում թղթախաղում վտանգի ենթարկել բոլոր իւր սիրածների վիճակը։ Մոլութիւնը չչմեցնում է Սարոյեանին և նա առնուլ է տալիս իւր հարստութիւնը, իւր ընտանիքի բարեկեցութիւնը և, չը դիմանալով գործած յանցանքին, խելագարւում է։

Սարոյեանի ընտանիքը աղքատութեան մէջ ընկնում է։ Կինը և աղջիկը, չը նայելով իրանց բարի և անձնուէր բնութեան, անկարող են ապրուստի միջոցներ գտնել իրանց ընտանիքի համար։ Սարոյեանի մի որդին զբօսասէր, քէֆ անող մարդ է, միւսը ծոյլ, երրորդը (Դրիգորը) թէև լաւ, խելօք, բայց թոքախտով հիւանդ։ Դրութիւնը անելանելի է։

Նար-Դոսը իսկապէս շատ է անելանելի վիճակի մէջ գցել իւր նկարագրած ընտանիքը, բացասական դեր տալով նորա բոլոր անդամներին. բայց երևոյթը նա սխալ չէ դիտել և ճիշդ է նկարել է նորա մի քանի կողմերը։

Նար-Դոսի հերոսները գտնում են յաւտնի հայեացքների աղդեցութեան տակ։ Դրիգոր Սարոյեանը կուսակից է երևում այն տեսակէտին, թէ ցաւի, տանջանքի, նեղութեան մէջ կայ մի տեսակ հրապոյր, մի տեսակ կրթիչ փիլիսոփայութիւն—(մի կարծիք, որ համապատասխանում է Դոստոեւսկու գրւածքներից ստացած տպաւորութեան), թէ աղօթքը մեծ

փրկարար նշանակութիւն ունի մարդու նամանաւանդ տանջուած չարչարուած մարդու կեանքում։ Հեղինակը ստիպեն, որ հետևել է իւր հերոսների կեանքին և դրութեան, մի այնպէս վախճան է տալիս իւր հերոսուհի Աննային, որով ուզում է ասել թէ մերնիւթական աշխարհում, ուր ուտել, խմել է հարկաւոր, ուր ձեռքի աշխատանք է հարկաւոր, ուր մարդու կազմածքը ունի իւր բնական բաղմատեսակ պահանջները, մարդկային ոգին անկարող է միխթարուել և պահպանուել միայն քարոզներով։ Աննան, չը նայելով իւր որոշումին՝ ամրել իւր վիշտը աղօթքներով և լաւ ապագայի յոյսով—անկարող է համարում չարունակել իւր կեանքը և թունաւորւում է։

Նամակները գրած են մեծ զգացմունքով, թէև մէջը կայ խառն նաև սենտիմենտալիզմ։ Աւաջին երեք նամակները փոքր ինչ չեն համապատասխանում վէպիկի ամբողջութեան։ Այդ առաջին գլուխները ուրիշ բովանդակութեան գրածքի սկիզբ կարող էին լինել, և ընթերցողը իսկապէս սպասում է ուրիշ տեսակ չարունակութեան, քան գրտնում է գրքոյկի մէջ։ Եւ հէնց այդ սկիզբն է, որ համեմատաբար հետաքրքրական չէ այն աստիճան, որ գիրքը կարդալ սկսողը նորան ձեռքից չը դցի։

Մի քանի հոգեբանական գծեր շատ գեղեցիկ են դուրս բերուած և կրում են իրանց վերայ խնամքով արած դիտողութեան կնիք։ Լաւ են Ն, Զ, Ը, Ժ նամակները։

Գրածքի մէջ կան մի քանի ձգձգած տեղեր, անբնական դիրքեր։ Արշակ Սարուխանցի արբեցողութիւնը շատ էլ յատուկ չէ մեր կեանքին։ Գրիգոր Սարուխանը գիմնազիստ է և ունի 23—24 տարի հասակ, որ սակաւ է պատահում այժմեան ժամանակները։

Աննա Սարուխանը կրում է իւր վերայ լաւ գրական օրինակների ուսումնասիրութեան հետքեր։ Հեղինակի տաղը վիպական և գեղարուեստական երկերի համար լաւ սկիզբ կարող է համարուել, եթէ հեղինակը իսկապէս նուիրել է իրան գրականութեան այդ ճիւղի մշակութեան։ Թէև վէպիկը չէ գործում հասուն գրածքի տպաւորութիւն, բայց իւր մէջ պարունակում է լառաջադիմելու ընդունակութեան ապացոյցներ։

Ա. Գլ.

«ՍԱՐԿԱՒԱԳ»։ Ս.-Պետերբուրգ, տպարան Սկօրօխօդովի. 1890 թ. 8-ծալ. 71 երես. տառ № 12. գինն է 5 կոպէկ։

Պատմական-կենսագրական բովանդակութիւն ունեցող գրքերը միշտ մի առանձին հետաքրքրութեամբ է կարդում հասարակ ժողովուրդը. այդ պատճառով, ովքեր հաւատում են թէ ժողովուրդը կարելի